ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԲԵԼԳԻԱՅԻ ՍԵՆԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հոկտեմբերի 1-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում պաշտոնական այցով գտնվող Բելգիայի Թագավորության Սենատի նախագահ Արման դը Դեկերի գլխավորած պատվիրակությունը՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԺ Առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արա Բաբլոյանի:

Նորին Սրբությունը, բարի գալուստ մաղթելով պատվարժան հյուրին, անդրադարձավ հայ-բելգիական բարեկամական կապերին: Վեհափառ Հայրապետն ի դեմս պրն Դեկերի շնորհակալություն հայտնեց բելգիական իշխանություններին Բելգիայի հայ համայնքի եւ Հայոց Եկեղեցու հանդեպ ցուցաբերվող հոգատար վերաբերմունքի համար:

Հանդիպման ընթացքում խոսվեց Հայ Եկեղեցու առաքելության մասին, անդրադարձ կատարվեց տարածաշրջանային խնդիրներին, ինչպես նաեւ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ «ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՐՈՆԱՍԵՐ ՏԻԿՆԱՆՑ ՀԱՄԱԽՄԲՈՒՄԻ» ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Հոկտեմբերի 3-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Սուրբ Էջմիածնի Կրոնասեր Տիկնանց Համախմբումի» անդամներին, ովքեր Հայոց Հայրապետի հրավերով Լիբանանից ժամանել էին Ս. Էջմիածին՝ Համախմբումի հիմնադրության 50-ամյակը տոնախմբելու նպատակով:

Նորին Սրբությունը, բարի գալուստ մաղթելով Համախմբումի անդամներին, իր հայրական օրհնությունն ու գնահատանքը բերեց Համախմբումի նախագահ տիկ. Միմի Հարությունյանին եւ բոլոր անդամներին, որ արդեն կես դար մեծ նվիրումով եւ նախանձախնդրությամբ իրենց անսակարկ նպաստն են բերում Մայր Աթոռի եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պայծառացմանը՝ զորավիգ լինելով Մայր Եկեղեցու եկեղեցաշեն եւ ազգօգուտ ձեռնարկներին:

«Առանձնահատուկ ուրախություն եւ գոհունակություն է Մեր գահակալության առաջին իսկ օրվանից տեսնել ձեզ աջակից Մեզ՝ լծված Հայ Եկեղեցու պայծառացման գործին: ...Ուրախ ենք, որ այս առիթն ընձեռվեց Մեզ՝ շնորհակալություն հայտնելու Մայր Աթոռի հարազատ զավակներիդ, այս հաստատության զինվորներիդ, պանծացնելու ձեր վաստա-